



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » նոյեմբերի 2019 թ.

N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ ՈՒ Ղ Ա Ր
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Համատիրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Պ-311-08.10.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող) նշանակելու մասին» N 1660 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱԶԱՆՅԱՆ

«ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-311-08.10.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագծերի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները՝

Նախագծերով առաջարկվող՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի կողմից կատարվող վճարների անկանխիկ եղանակին անցնելու հետ կապված հարցը խիստ կարևորվում և դիտարկվում է որպես բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման գործառույթների իրականացման կայուն և թափանցիկ մեխանիզմների արմատավորմանը նպաստող գործոններից մեկը՝ ինչպես Հայաստանի Հանրապետության կառավարության, այնպես էլ՝ գործընթացի բոլոր մասնակիցների (սեփականատերեր, համայնք և այլն) կողմից:

Հարկ է նշել, որ, ի թիվս բազմաբնակարան շենքերի կառավարման համակարգի զարգացման հնարավորությունները խոչընդոտող առկա բազմաթիվ խնդիրների (շենքի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորում, սեփականատերերի իրազեկում, ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի գրանցման հարցեր, գործընթացին մասնակից բոլոր կողմերի, այդ թվում՝ պետության և համայնքի իրավունքների ու պատասխանավորության հստակեցում, որոշումների ընդունման համար անհրաժեշտ ձայների հարաբերակցության վերանայում և այլն), շինությունների սեփականատերերի կողմից պարտադիր նորմերի դիմաց վճարումների

կատարման գործընթացի թափանցիկության ապահովման հետ կապված հարցերը քննարկվել են բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառում առկա խնդիրների կանոնակարգման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի օգոստոսի 20-ի N 1160-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի 2019 թվականի սեպտեմբերի 17-ին կայացած նիստում:

Քննարկման արդյունքների հիման վրա որոշվել է նշված խնդիրների կանոնակարգման նպատակով փուլային եղանակով մշակել բազմաբնակարան շենքի կառավարման բնագավառը կանոնակարգող իրավական ակտերի վերանայման վերաբերյալ առաջարկություններ:

Մասնավորապես, առաջին փուլով նախատեսվում է կանոնակարգել բազմաբնակարան շենքի սեփականատերերի կողմից կատարվող վճարումների անկանխիկ եղանակին անցնելու, սեփականատերերի կողմից որոշումների կայացման համար անհրաժեշտ ձայների հարաբերակցության վերանայման (թեթևացման) և շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի բարելավմանն ուղղված աջակցության ծրագրերի իրականացման համար որոշումների կայացման մասով առանձնահատկությունների սահմանման հետ կապված հարցերը:

Այդ նպատակով մշակվել է բազմաբնակարան շենքի կառավարման բնագավառը կանոնակարգող օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրենսդրական փաթեթի նախագիծ (այսուհետ՝ նախագիծ), որում արտացոլվել են նաև պատգամավորի կողմից ներկայացված նախագծերով առաջարկվող կարգավորումները: Ընդ որում, մշակված նախագիծը նախատեսվում է քննարկել նշված աշխատանքային խմբի առաջիկա նիստում, որից հետո այն

արդեն սահմանված կարգով կանցնի քննարկման փուլ և կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

Ելնելով շարադրվածից՝ բնագավառում տարվող միասնական և առավել հասցեական քաղաքականություն ապահովելու նպատակով նպատակահարմար ենք գտնում նախագծերով ներկայացված առաջարկությունները և բազմաբնակարան շենքի կառավարման բնագավառի առաջընթացի հնարավորությունները սահմանափակող այլ խնդիրների կանոնակարգումը դիտարկել մեկ փաթեթով, ուստի, առաջարկում ենք բազմաբնակարան շենքի կառավարման բնագավառը կանոնակարգող օրենսդրության վերանայման նախաձեռնությունների դեպքում համագործակցել նշված աշխատանքային խմբի հետ:

Այնուամենայնիվ օրենքների նախագծերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

1. Առաջարկում ենք քննարկման առարկա դարձնել վճարումների կատարման նպատակով բացվող բանկային հաշիվը ոչ թե կառավարման մարմնի, այլ շենքի համար բացելու հնարավորության հարցը, ինչը կապահովի հավաքագրված վճարների հասցեականությունը և թափանցիկությունը:

2. Սեփականատերերի կողմից անկանխիկ եղանակով կատարվող վճարման կարգը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանելու վերաբերյալ դրույթը հակասում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 929-րդ հոդվածի դրույթներին, այդ իսկ պատճառով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանել ոչ թե սեփականատերերի կողմից անկանխիկ եղանակով կատարվող վճարման կարգը, այլ այդ նպատակով բացվող հաշիվների վարման կարգը:

3. «Համատիրությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխությունների նախագծում օգտագործվում է «հատուկ բանկային հաշիվ» հասկացությունը, նախագծով հիմնավորված չէ, ինչու պետք է բացվի հատուկ բանկային հաշիվ և դրա վրա տարածվեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված հատուկ հաշվին բնորոշ առանձնահատկությունները: Հաշվի առնելով շարադրվածը՝ լրացուցիչ քննարկման կարիք ունի նախագծում «հատուկ» բառի կիրառման հարցը:

4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պաշտոնական շրջանառության մեջ է դրել «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որը համապարփակ կարգավորում է գրեթե բոլոր անկանխիկ վճարումների հետ կապված իրավահարաբերությունները: Նախագիծը գտնվում է լրամշակման փուլում և շուտով ներկայացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը: Այսպիսով, նախագծերով ներկայացվող կարգավորումները լրացուցիչ քննարկման կարիք ունեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից շրջանառության մեջ դրված՝ «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի համատեքստում:

5. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «Օրենքը լրացնել 15՝ հոդվածով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Օրենքը լրացնել նոր՝ 15.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջները: Միաժամանակ լրացվող հոդվածի «15՝» թիվն

անհրաժեշտ է փոխարինել «15.1» թվով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջները:

6. Նկատի ունենալով այն, որ «Համատիրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով կատարվում է նույն փոփոխությունը՝ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «7. Համատիրությունը պարտավոր է սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ:» նախադասությունն անհրաժեշտ է հանել:

7. «Համատիրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «Օրենքի 28-րդ հոդվածի «ա» կետում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջները:

8. Նախագծի 2-րդ հոդվածի «կետադրական նշանով և» բառերն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջները:

9. Միաժամանակ, առաջարկում ենք վերանայել նախագծերով ներկայացված օրենքներն ուժի մեջ մտնելու ժամկետները՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի պահանջները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2019 թվականի N 1660 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Համատիրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-311-08.10.2019-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2019 թ. նոյեմբերի 11
Երևան



Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-334 օրենքի (այսուհետ Օրենք)

1. 11-րդ հոդվածի 7-րդ մասի «Ժդ» կետում «կարգի և» բառերը հանել.
2. 11-րդ հոդվածի 7-րդ մասի «Ժե» կետում »,վճարման կարգի» բառերը հանել.

Հոդված 2. Օրենքը լրացնել 15¹ հոդվածով.

«Հոդված 15¹ . Շինությունների սեփականատերերից գանձվող պարտադիր և այլ վճարների վճարման կարգը

1. Շինությունների սեփականատերերը սույն օրենքով սահմանված պարտադիր վճարները, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով հաստատված այլ վճարները բազմաբնակարան շենքի կառավարման մարմնին վճարում են անկանխիկ եղանակով՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի բանկային հաշվին:

2. Բազմաբնակարան շենքի կառավարման մարմնին շինությունների սեփականատերերի կողմից անկանխիկ եղանակով կատարվող վճարման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հողված 1. «Համատիրության մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-333-Ն օրենքի (այսուհետ Օրենք) 3-րդ հոդվածի 7-րդ մասում «իրավունք ունի» բառերը փոխարինել «պարտավոր է» բառերով.

«7. Համատիրությունը պարտավոր է սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ:»:

Հողված 2. Օրենքի 28-րդ հոդվածի «ա» կետում «և այլ վճարումներից» բառերից հետո լրացնել «՝ անկանխիկ եղանակով տվյալ համատիրության կողմից բացված հատուկ բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով» կետադրական նշանով և բառերով:

Հողված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Համատիրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը բխում է համատիրության պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերին վերաբերող ողջ տեղեկատվության հասանելիության ապահովման, հնարավոր կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման, համատիրության յուրաքանչյուր անդամի կողմից կատարված փայավճարների և այլ վճարների գործընթացի հսկողության և իրենց պատասխանատվության բարձրացման անհրաժեշտությունից:

2. Առկա իրավիճակը և խնդիրները.

2002 թվականի մայիսի 7-ին ընդունված և 2002 թվականի հունիսի 6-ին ուժի մեջ մտած «Համատիրության մասին» ՀՀ օրենքը (մասնավորապես՝ 28-րդ հոդվածի «ա» կետը) սահմանում է համատիրության միջոցների գոյացումը հետևյալ կերպ.

Համատիրության միջոցները գոյանում են.

ա) համատիրության անդամների և շենքի այլ շինությունների սեփականատերերի պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարումներից և այլ վճարումներից.

բ) օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

Հողվածի առաջին կետը խնդրահարույց է, քանզի չի ներառում միջոցների գոյացման համար նախատեսված պարտադիր վճարումների կատարման կարգը՝ խոչընդոտելով դրանց արդյունավետ իրականացմանը:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետությունում բազմաբնակարան շենքի կառավարումը իրականացնող համատիրությունները ստեղծվում են իրավաբանական անձանց կարգավիճակով՝ բաղկացած լինելով տարբեր գործադիր մարմիններից. ընդհանուր ժողով, վարչություն (այսուհետ՝ վարչություն), նախագահ, կառավարիչ: Համատիրության հիմնական նպատակն է՝ բնակարանների սեփականատերերի ընդհանուր գույքի, նախատեսված պարտադիր վճարների իրականացումը և կառավարումը: Սակայն համատիրության կառավարման մարմինները միշտ չէ, որ սեփականատերերին պահում են իրազեկված՝ հանգեցնելով իրենց իրավունքների ոտնահարման: Սեփականատերերի մեծ մասը տեղեկացված չէ, արդյոք իրականացվում է իրենց կողմից կատարված համատիրության պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների մուտքը բյուջե և այդ գումարների հետագա բաշխումը բյուջեից, ըստ անհրաժեշտության:

Տվյալ իրավիճակը հանգեցնում է մի շարք խնդիրների կապված համատիրության կանոնադրությամբ նախատեսված սահմանված կարգով համատիրության բյուջեի և հաշիվների պլանավարման և իրականացման, բանկային հաշիվների բացման, տեխնիկական սպասարկման բարեկարգման վերահսկողության հետ՝ անհրաժեշտություն ստեղծելով պետության կողմից լրացուցիչ վերահսկողություն իրականացնելու և առավել խիստ պահանջներ սահմանելու:

Այսպիսով, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» 11-րդ հոդվածի 7-րդ մասի «ժդ», «ժե» կետերը և «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ մասը և 28-րդ հոդվածի «ա» կետը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ ֆինանսական քաղաքականություն վարելու առկա պահանջներին ու կարիքներին:

3. Կարգավորման նպատակը և բնույթը.

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Համատիրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը նպատակ ունի համատիրությունների անդամների կողմից պարտադիր վճարների անկանխիկ եղանակով տվյալ համատիրության կողմից բացված հատուկ բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով ապահովել ողջ գործընթացի թափանցիկություն, այն է՝ տեղեկատվության հասանելիության ապահովման իրավական հնարավորություն:

4. Ակնկալվող արդյունքը.

Օրենքների նախագծի փաթեթի ընդունմամբ կապահովվի համատիրության անդամների պատասխանատվության աստիճանի բարձրացումը և հանրային միջոցների արդյունավետ բաշխման համակարգի ստեղծումը, մասնավորապես՝ «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ մասով և օրենքի 28-րդ

հողվածի «ա» կետով սահմանված բանկային հիմնարկներում պարտադիր կերպով հաշվարկային հաշիվների բացում դրամական միջոցները պահելու և դրամական բոլոր տեսակի գործառնություններն իրականացնելու համար և համատիրության անդամների և շենքի այլ շինությունների սեփականատերերի պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարումների գործընթացի արդյունավետության և թափանցիկության ապահովում:

Սույն փոփոխությունը չի առաջացնում ֆինանսական հավելյան ծախսեր: